ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-19/2 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան

26.03. 2019թ.
ժամը՝ 12:00

Հանձնաժողովի նախագահ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենսաբազմազանության վերահսկողության վարչության բուսական աշխարհի վերահսկողության բաժնի պետ՝ — Մ. Սանթրոսյան

Անդամներ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գլխավոր մասնագետ՝ — Գ. Մակինյան

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վարչության ջրերի և մթնոլորտի վերահսկողության բաժնի պետ՝ — Ա. Քամալյան

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենսաբազմազանության վերահսկողության վարչության բուսական աշխարհի վերահսկողության բաժնի ավագ պետական տեսուչ՝ — Է. Միքայելյան

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենսաբազմազանության վերահսկողության վարչության բուսական աշխարհի վերահսկողության բաժնի ավագ պետական տեսուչ՝ — Ա. Թորոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ — Լ. Ադոնց

1. ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համաձայն որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1.1 Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվության, առաջին տեղ զբաղեցրած մասնակցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ինչպես նաև բավարարում է հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանները:

1.2. **Գնահատող հանձնաժողովը բավարար գնահատեց** ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված հիմնավորող փաստաթղթերը և ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հրավերով նախատեսված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

Հանձնաժողովը որոշեց.

2.1. Ընտրված մասնակից ճանաչել «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին:

2.2 Հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Մասնակցի հետ համապատասխան չափաբաժնի մասով կնքել պայամանագիր՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

2.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.5 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Մ. Սանթրոսյան	ԳՊ/ԳԱՊ
Անդամներ՝	Գ. Մակինյան	ԳՊ/ԲԱ
	Ա. Քամալյան	ԳՊ/ԲԱ
	Է. Միքայելյան	ԳՊ/ԳԱ
	Ա. Թորոսյան	ԳՊ/ԳԱ
Քարտուղար՝	Լ. Ադոնց	ԳՊ/ՄՀՄ